

կարգաւոր քաղաքացիական թուղթի մէջ և չէ կրցեր ցարդ իւր իշխանութիւնն ազգային միութեան համակրութեան վրայ հիմնել, այլ նիւթական զորութեան յեցեալ է, ինչպէս կրէ Լորտ Սթրաֆֆորտ-Սթրաֆֆորտի նախարարութիւնն սրտով ընտանի կրնայ ըլլալ Ասիական թուրքերոյ ժողովրդոց, որոց ամենամեծ մասն անոր անունն անգամ լսած չեն, և արատանելու իսկ անկարող են: Այսու ամենայնիւ, եթէ Պր. Սթրաֆֆորտ — Սթրաֆֆորտի նախարարութիւնն յաջողի ինչ որ Սթրաֆֆորտի գերաւորանքն չէ կրցած ընել այսպիսի դարերէ ի վեր, եթէ փոքր — Ասիա և Միջագետք նոր կեանք մ'առնուն անոր շնորհիւ, Արեւելքն Արեւելեան ժողովրդոց համար ապահովելով իւր արքայաշէն տարեր փոխադարձ իրարունքն յարգելու պայմանաւ, եթէ Ասիական թուրքիան ապահովի ապագայ յարձակմանց դէմ, ոչ միայն կիսարեւելի կարգաւոր վրայ չենք ցուիր, այլ և կրնանք ըսել թէ Պր. Սթրաֆֆորտ — Սթրաֆֆորտի արձաններն Երրորդայն հովտին վրայ կանգնելու արժանի են:

Ասիոյ ժողովուրդք դէտակն կեցած են, աշխարհ անխաղիչ կ'ազատէ, և պատմութիւնն իրաց ընթացքն անփոփոխութիւն արձանագրէ իւր էջերուն մէջ:

Տէպա լրագիրը Տէրութեանց խորհուրդը բաժանման խորհուրդ մը կանուանէ, որ ապագայ և վերջնական բաժանման մը սկզբնաւորութիւն կը նշանակէ: Արեւելեան խնդրոյն սկիզբէն ի վեր Պէրլինի լրագիրք թուրքիան բաժանելու առաջարկութիւնը կը ներկայացնէին, երկու կայսերաց դաշնակցութիւնն օրինակ բան նշանակելու, սակայն Սէպիս կը իմացէր և կը մերժէր բաժանման մասնակցիչ, Բայց այն վայրկեանին՝ երբոր կը կարծուէր թէ միջազգային իրաւանց և դաշնագրութեանց պաշտպանութեան համար սուրբ պիտի քաշէ, Լորտ Պր. Սթրաֆֆորտի ընդունած գաղափարն իւր թուրքիայ բաժանման սկիզբը եղ զ'անկ Անգլիոյ, Ռուսիոյ, Ալբանիոյ և Բալկանեանի միջին, Տէպա տակաւին կ'արտայայտէր իր խնդիրը արտաքին համար, կ'ըսէր, որ անոր անգլիական իշխանութեան համար յարգութեան և հետաքրքրութեան արժանի է իւր կարծիքը քիտանալ յունիս և ի դաշնագրութեան հրատարակութեան նախ և ետ: Բրիտանական դրոշմն անցնել հինգ շարժի օրը կիսարեւելի վրայ պարզուեցաւ, և Անգլիական զորքը կողմն ելաւ: Այս լուրն արգեստ ինչ տպաւորութիւն պիտի ընէ Գաղղիոյ վրայ, և արդեօք այս վերջինն ևս փոխարինութիւն մը պիտի տեսնուի, ինչպէս կը խօսուէր, քանի որ իրարի վրայ պաշտպանութեան մը, Գաղղիա արդէն կիսարեւելի Անգլիոյ տրուելէն տեղեկութիւն առած ժամանակ բաղձանք յայտնած էր որ կողմն միայն մէկ նաւահանգիստն Անգլիական նաւատորմին կայարանն ըլլայ: Բայց ինչ պիտի ըսէ արդեօք երբ Միջերկրականի ամենէն կարեւոր կողմններէն մին ևս Անգլիոյ ձեռք անցնի Այժմ այս հարցմանց պատասխան գտնելը զիւրիս չէ, և կը թողուք որ ժամանակն ու դէպքերն ինքնին պատասխանեն:

Լրագրոյս մօտիւր գրուած վայրկեանն արժանահաւատ աղբիւրէ կիսմանք թէ Պէրլինի նոր դաշնագրութեան մէջ Այսթիֆանոսի դաշ-

նագրութեան 16-րդ յօդուածն հետեւեալ ձևն ստացեր է.

« Բ. Դուռը խօսք կուտայ առանց այլ ևս յապաղման ի դուրս դնել Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարւոքութեանն ու բարենորոգումներն, և անոնց (Հայոց) ապահովութիւնն երաշխաւորել Գրեյս և Չէրքէզայ դէմ: Բ. Դուռն այս նպատակով ձեռք առնելիք միջոցներուն վրայ պարբերաբար (Ժամանակ ժամանակ) ծանօթութիւն պիտի տայ տէրութեանց, որք հսկողութիւն պիտի ընեն: »

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 16 յուլիս.
Մոնիթէօր լրագիրն իւր պաշտօնական մասին մէջ հրատարակեց Պէրլինի դաշնագրութիւնը:

Այս ամսուս համար հետեւիք:

Լոնտոն 16 յուլիս, առաւօտ.
Լորտ Պր. Սթրաֆֆորտ և Լորտ Սթրաֆֆորտի այսօր Լոնտոն հասան, և ետեւ դաղին համակրութեամբ ընդունուեցան ժողովրդէն:

Երեսփոխանաց ժողովին ներկայացեալ պաշտօնագրաց միոյն մէջ Լորտ Սթրաֆֆորտի կը պնդէ թէ Տէրութեանց խորհուրդին մէջ իւր յունիս 1-րդով հանած չըջարկականին աշխարհաւարութեանը հետեւած է: Պէրլինի դաշնագրութիւնը կըսէ, մեծ երկիր մը վերադարձուց Սուլթանին, և Թուրքիոյ հաստատութիւնն ու անկախութիւնը կ'ապահովէ: Բայց խնդիրն է գիտնալ թէ Թուրքիա վերականգնելու համար օգուտ պիտի քաշէ՞ այս առթիւ, որ հաւանականաբար վերջինը պիտի ըլլայ:

Լոնտոն 16 յուլիս, իրիկուն.
Երեսփոխանաց ժողովին մէջ երեւոյթից նախարար Սթրաֆֆորտ Նորթփոլթ ըսաւ թէ յունիս 4-ի դաշնագրութիւնը Սուլթանին և իւր հպատակաց միջին զինուորներու հետ կուտայ Անգլիոյ, և աւելցուց թէ Անգլիա խօսք չէ տուած Ասիական թուրքիան ապահովելու համար զորաբանակ մը հոս պահելու:

Նոյն նստին մէջ արտաքին գործոց նախարար խորհրդական Պ. Պրեքը հարցման մը պատասխանելով ըսաւ թէ ինք Թուրքիոյ և Տրիպոլիոյ երկրներն իրար վրայ կամ Գաղղիոյ տրուած ըլլալու խօսք չէ ըսած:

Վիեննա 17 յուլիս, իրիկուն.
Գարաթոնորի և Մէհմետ Ալի փաշաներն հոս հասան: Կը կարծուի թէ անոնց ներկայութիւնը Պոստիոյ և Հէրսէքի գրաւման վերաբերեալ բանակցութիւնները փութացնելու կը նպաստէ:

Պէրլին 17 յուլիս.
Պր. Սթրաֆֆորտ իրանը Գրեյսին գնաց:
Պրեքը 17 յուլիս.

Կառավարութիւնը գործնական կէն 18000 մարդ պիտի արձակէ անկախութեան խորհրդոյ նախագահ Պ. Պր. Սթրաֆֆորտի կողմէն իշխալով ծանրապէս վերաւորեցաւ:

Հուլիս 17 յուլիս.
Թագաւորն ու Թագուհին աղաչուեցան որ Հուլիս վերադառնան: Թագուհին իր խոսք մեծ և մինչև իսկ սպառնալից է կիսարեւելի Անգլիոյ տրուած ըլլալու լուրին վրայ:

Լոնտոն 17 յուլիս
Օտմ. Բոնա. 47
Փոխ. 1863 26 1/2
» 1869 23 1/4
» 1871 5 1/4
» 1872 38 1/4
» 1873 20 3/4
» 1874 73
Անգլ. Բոնա 95 5/8

Փարիզ 17 յուլիս
Օտմ. Բոնա. 16,90

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն առաջին կարգի Մէհմետի պատուանշան տուաւ Արքունեաց Միւշիքի Ղազի Օսման փա-

շային և երկրորդ կարգի Մէհմետի տուաւ տախիլանութեան նախարար Մէհմետ փաշային:
Նոյն պատուանշանին երրորդ աստիճանը տրուեցաւ Հասունեան Կաթիլի Հայոց ներկայացուցիչ Թընկըր Բալաքէ Էֆէնտին:

Երկու օրէ որ զորոյց կը պտըտի մայրաքաղաքին մէջ թէ Հիլլեական զորքերը սահմանագիծին անցնելով իրհայա և Եանեա մասը՝ Օսմ. զօրաց հետ կուտի բռնուելու են, որոյ մէջ Օսմանեան զօրաց հրամանատար Բէհէպ փաշան ալ վերաւորուել է: Այս զորոյցները պաշտօնական կերպիւ չեն հաստատուած:

Պէրլինէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Օսմանեան իրաւոր պատուիրակներն երեքշաբթի իրիկուն Պէրլինէն մնկներ են՝ ուղղակի Կ. Պոլիս գալու համար:

Օսմանը լրագիրը կըսէ Ռուսաց թօթիկէն զօրապետը նախընթաց օրը մնաք բարովի այցելութիւն մը տուել է Մաքքեդի Օսմանեան բանակի գործին, և այս այցելութեան անմիջապէս յետոյ ետ քաշուելու շարժումներն սկսել են Ռուսաց բանակին մէջ:

Լրագիրք ոմանք լուր տուին թէ Բ. Դրան ապագրական տեսչութեան տնօրէն Մաճիտ պէյ փաշայութեան աստիճանաւ Մուսուլի կառավարիչ անուանելու և Բորթոսպէնի Միքայէլ Էֆէնտին ալ անոր տեղ ապագրական գիւնին տնօրէն անուանելու է: Այս լուրը դեռ պաշտօնապէս չը հաստատուեցաւ:

Թղթագրամի գնդին բարեփոխման պատճառաւ հային դիրք 10 փարա իջաւ:

Կարինէն յունիս 15-րդով հետեւեալ կը գրեն կովկաս լրագրին:
« Վերջին օրերու կարնոյ այլ և այլ ազգէ բնակչաց գլխաւոր ներկայացուցիչները կ'փութան իրենց երախտագրութիւնը յայտնել Կարնոյ Ռուսական իշխանութեան, որ քաղաքին մէջ կատարեալ և խիստ բարեկարգութիւն հաստատուելու անաշուտ արդարութիւն ի դուրս կը դրնէ: Բունիս 5-ին Շապուհեան Գրիգոր Էֆէնտին, որ կաթողիկ Հայոց գլխաւորն է, երկուշաբթի մը տուաւ ի պատիւ Ռուսոյ Յունիս 10-ին Արապգատէ Ալի Էֆէնտին, Կարնոյ ամենէն հարուստ և ամենէն պատուաւոր իւր լամը ճաշ մը տուաւ Ռուսաց 30-ի չափ բարձր պաշտօնատէրաց և նոյն չափ ալ տեղական ժողովրդեան գլխաւորաց: Նոյն օրն Հայազգի Բաստըրմաճեան Յարութիւն Էֆէնտին ալ շքեղ երեկոյթ մը տուաւ հանգերձ լուսավառութեամբ: »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՆԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ
5 յուլիս շրեքշաբթի իրիկուն 18,16
6 յուլիս հինգշաբթի առաւօտ
բացուեցաւ 18,20
կէս օրին 18,37
Բուլճարի երկաթուղի ֆր. 72
Թղթագրամ լիւր 266

ԸՆԹԱՅԻՆ ԱՐԺԱՅԻՆՆԵՐ

Կ. Պոլիս 5 Յուլիս
Սոսիէթէ Դէնկրալի բաժ. Անգլ. լիւր. 4,35
» փոխանակութեան » 4
Կ. Պոլսոյ Պանքային » 6
Քրէտի Դէնկրալ » 6,5
Քրէտի Օսթրո-թուրք »
Փոխ. 1863 37, 120

1863	422
1869	413
1872	35
1873	402
Թրամալ	Օտմ. լիւր. 1 55

Ա.Չ.Կ.Ա.Յ.Ի.Ն

ՀՐԱՆԻՐ ԱՌԱՋԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՆ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ յուլիս 7-ի Գուռ Գաբու Մայր եկեղեցի:

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամ 6-ին և գոցուի 10-ին:

Հրաւիրեալ են Երեւոփոխան Էֆէնտիններն՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:

3 յուլիս 1878
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՑ
ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԵՍԿԱՊՈՍ

ՕՐԱԿԱՐԳ.

1. Ուղերձ ի պատասխանի նախագահական ճառին.
2. Տեղեկագիր իրաւասութեան գիւնին ի վերայ հրաժարականի կրօն. և Գաղ. ժողովոյց.
3. Տեղեկագիր նախաձեռնութեան գիւնին ի վերայ առաջարկութեան յետաձգման Ազգային Ժողովոյ նիստերուն.
4. Տեղեկագիր Մայր եկեղեցական և աշխարհական երեսփոխանաց համար:

Հ. Ս. ԱՆՏԵՆՆԵՐ

ՀԱՅԿԱՆ ԽՆԴԻՐ

Եւրոպիոյ մէջ ի նպաստ Հայոց համակրական ցոյցները մինչև վերջին օրերս կը շարունակեն: Ինչպէս որ անցեալ շաբթու. ծանուցած էինք, Անկիո—Հայկական մասնախորհուրդի մը հրաւիրանք գուամարում մ'եղեր էր Լոնտոնի մէջ Հայոց եկեղեցւոյն և ազգին համակրութիւն յայտնելու համար. ուր Հայոց վրայ քանի մը նպատաւոր նամակներ կարգացուեցան և ճառեր խօսուեցան: Տիկին Սթրաֆֆորտի, Լորտ Շաֆթէզպերի և Լորտ Քարնարփոնի ճառերն ամենէն նպաստաւոր էին: Լորտ Շաֆթէզպերի ըսաւ թէ Հայոց և ուրիշ քրիստոնէից վերակազմութեան պայմաններէն մին ևս կրօնական ազատութեան ու հաւատարմութեան սկզբունքը, թէ Պէրլինի տէրութեանց խորհուրդն այս սկզբունքը հաստատեց Գաղղիոյ լիազօր երեսփոխան Պ. Վատինիթօնի առաջարկութեամբ, ընդդէմ քանի մ'առաւարկութեանց: Բայց ասոնք որ կողմէ կուգային: Ռուսիոյ երեսփոխանաց միոյն կողմէն, Այս ընթացքը Ռուսիոյ հին աշխարհավարութեան համաձայն էր, որով կուգէ վերակենդանանալու վրայ եղող եկեղեցիներն ու ազգերը կ'են, այն աշխարհավարութեան, որ 1853-ին Նիքոլա կայսրն Անգլիոյ և անոր դաշնակցաց հետ պատերազմի առաջնորդած էր Գաղթականութեանց նախկին նախարար կոմս Քարնարփոն՝ Հայոց վրայ խիստ համակրական ճառ մը խօսելով առաջարկեց որ ընդունուի թէ այն վարչական բարենորոգումները զորս Պէրլինի Հայ պատուիրակները կը ներկայացնեն, Հայաստանի մէջ ապրող ամեն ազգաց և ցեղերու համար բարեփոխութիւն մը կ'ապահովեն՝ առանձին Հայ գաւառ մը կ'ազմեցնուի:

Մանչեսթրի Էկզամինէրն Էնաթիպ լրագրոյն յուլիս 2-րդուն մէջ

այն հետեւեալ անգիւրը կը կարգաւորէր ի նպատակ հայոց:

«Տէյիլ Նիւզի թղթակցը վանայ չըմակայից վրայ լուրեր կը հաղորդէ: «Գիւրդերու ձեռքով Հայ ժողովրդը եւան վրայ գործածած սոսկալի ոճիրներու վրայ կը խօսի, և կը ծանուցանէ թէ՛ Հայկական ուրիշ գաւառներէ ալ նմանօրինակ լուրեր առնուած են:

«Մեր ստացած նոր հեռագրերը կը ծանուցանեն թէ Թուրք իշխանութիւններն եղածներուն վրայ աչք կը գցեն և թէ քիւրդերն ուրիշ ժամանակներէ աւելի շարացած են: Քրդաց հրոսակներ երկիրն այնչափ աւերած են, որ շատ տեղեր սով երևան ելած է և արդէն ժողովուրդն անօթութենէ մեռնի սկսած: Հայերը, ինքզինքնին պաշտպանելու համար բաւական զորաւոր են, եթէ թող արտի իրենց միասնալ և երկրին վարչութիւնն իրենց ձեռքը առնուի: Քայց այս բանը ներքի չէ՛ կա. աւազարական զօրութիւնը Թուրքաց ձեռքն է. առնոք ալ այդ զօրութիւնը Հայերն անպաշտպան պահելու կը գործածեն, որպէս զի քիւրդերու հարուածոցն ու հարստահարութեանցն ենթակայ ըլլան միշտ:

«Հայք այս միջոցիս պատուիրակներ զրկած են ի Պէրլին՝ տեղական վարչութիւն մը խնդրելու համար՝ Բ. Դրան վեհապետութեան ներքեւ, և այնպիսի սկզբանց վրայ հիմնեալ, որք ամեն ցեղերէ և կրօնքէ բնակչաց նպաստաւոր ըլլան: Հայոց այս խնդիրն ոչ միայն արդար է, այլ և փոքր Ասիոյ մէջ Ռուսիոյ յառաջխաղացութիւնն արգելելու միակ միջոցը:

«Անգղիական պաշտպանութեան անհնիժեթ խորհրդէն աւելի լաւ է պարզ ծրագիր մը, որ երկրին ժողովրդոցն արտօնութիւն տայ ինքզինքնին կառավարելու:

Քայց որպէս զի ոչ միայն նպատակաւոր, այլ և անպատակաւոր կարծեաց վրայ ևս մեր ինքնիշխանութեան թիւն ունենան, հարկ կը համարինք Տրապիզոնի նախկին Անգղիական հիւպատոս Պ. Բալկրավի թոյլմիջ լրագրին մէջ հրատարակուած մէկ նամակը յիշել, ի պատասխանի Լորտ Բարնալ վոնի ատենախոսութեան Պ. Բալկրավ կը ժխտէ Հայաստանի մէջ բնակչաց մեծագոյն մասին Հայ ըլլալը: Քայց այս կէտը ճշգրիտ վիճակագրութիւնները միայն կրնան պարզել: Պ. Բալկրավ կը ժխտէ զարձեւալ Ասիոյ Հայոց ինքնօրինութեան փափոք կամ կարողութիւն ունենալը: Այս տեղադրութեան նկատմամբ ինչպէս և ուրիշ պատմագրեր յիշելով կրնէ թէ Հայք հին ժամանակներէ չեն կրցած իրենց ձեռքը անցած առիթներէն օգուտ քաղել թէ այժմ գործունեայ, ստակ սիրող և վաստակող ցեղ մ'են, և դարերէ ի վեր որ և է կառավարութեան, Ռուս ժամանակի կամ Պարսիկ, ամենապիտան ծառայներն եղած են: «Ելեզեցաւ կան կազմակերպութիւն մը, կըսէ, աներբն անվերջանալի հերձուածներ զրոյ խորատկեայ, տիրացուական միտքով մը՝ շարունակ տիրացունեորու կռիւներով զբաղեալ, աղքատ և առաւելաբար առն զրակնութիւն մը՝ վանական հնութիւններով պահուած, ահա ասոնք են ազգային անհաստականութեան մը հաստատուութեան տարրը, մերձակայ ազգերը զրուսաւորելու լոյսը, որ եւանդաւորութեան աչքը կը շրջուէն:»

Այս խորհրդածութեանց յենլով Պ. Բալկրավ կը պնդէ թէ Հայք արժանի չեն կրնար ըլլալ լուրջ դիտողներու ուշադրութեան, և կըսէ թէ որդեօք իւրօրոյն չեն կրնար ինքնաշարժ ըլլալ:

Նորինութիւն խնդրելու ներկայանային, զիրենք պաշտպանող պիտի ըլլար:

Ինչպէս կը տեսնուի Պ. Բալկրավ քանի մը կէտերու մէջ չափազանց խստութեամբ, և շատ կէտերու մէջ ալ բոլորովին անիրաւութեամբ կը դատէ Հայերը: Ասիոյ Հայերը պէտք չէ եւրոպիոյ Հրէից հետ չփոխել: Եւրոպիոյ Հրէայք այսօր կատարեալապես զատութիւն ու հաւասարութիւն կը վայելեն. ոչ ոք կարող է անոնց կեանքն, ինչքն ու պատիւը բռնաբարել, և երբ քաղաքացիներու դաս մ'իւրենց ամեն իրաւունքն ապահովեալ կը տեսնեն, իրաւունք չեն ունենար ուրիշ պահանջուիներ ընելու:

Անտարակոյս ենք որ Անգղիա գտնուող ազգայինք Պ. Բալկրավի չարախօսութեանց արժանաւոր հերքում մը տալու չեն դաժգաղիր:

Ընդեալ շարժու Լոնտոնէն 72 երեսէ բաղկացեալ Անգղիերէն տետրակ մ'ենկաւ մայրաքաղաքս, Հոյս և Արեւելեան Ինքէ մակագրով, որոյ մէջ տպուած են անցեալ տարիէն ի վեր Հայոց ազգին նկատմամբ Եւրոպական լրագրաց մէջ հրատարակեալ կարեւոր յօդուածները, Սէթ Արգարի յիշատակագիրն, Անգղիոյ նշանաւոր անձանց արուած ուղերձներն և այլ կարեւոր գրութիւնք, որք ամեն Հայոց ընթերցմանն արժանի են:

Ամեն Ս. Պատրիարք հայրը Ձերազանի վերջին անցքին պատճառաւ ի դիմաց Ազգիս խնդակցութեան ուղերձ մ'ուղղած էր առ Ոգոստոս փառ Սուլթանն: Բարձր Մեծ-Եպարքոսին կողմանէ անցեալ շարժու գիր մ'ենկաւ Պատրիարքարան, որով կը ծանուցուի Ս. Պատրիարք հօր, թէ յիշեալ ուղերձը կարգաւորելով յառաեանի Ոգոստոս Սուլթանին, շատ գոհ եղաւ Նորին վեհափառութիւնը, և յատկապէս հրամայեց հաղորդել իւր բարձր գոհակալութիւնը: Փռնչ

Կիրակի օրը Մէրեքմէքուլեան ազնուահի Մաքրուհի օրհորդին ամուսնութեան հանդէսը՝ կատարուելով ի Մեծ կղզին, Ամեն Ս. Պատրիարք հայրը՝ Մէրեքմէքուլեան բարեհամբաւ գերդաստանին անդամաց վրայ ունեցած համարման և համակրութեան ի նշան, հաճեցաւ իւր պատկառելի ներկայութեամբ պատուել զիրենք, և իւր առաքելական օրհնութեամբ պատկել զխօսեցեալսն, մայրութեամբ որ, Ազգին պատուաւոր գերդաստաններուն կարգին մէջ իրենց փայլն աւելցնեն և միշտ օգտակար ըլլան Ազգին սերունդէ ի սերունդ:

... Խմբագիր .

Ինչպստ Ազգ. Ս. Փրկչեան Հիւանդանոցի փետր. 24 ին տրուած պարահանդէսի Պատուարժան Մասնախումբը՝ որ լրագրաց միջոցաւ իւր հաշիւն ու տեղեկագիրը հրատարակած էր, Մեծ Նուիրատուներէ հանգանակած գումարէն Ազգ. Հիւանդանոցի մասը ընթացիկ դրամ 78486 1/2 եօթանասունը ութը հազար չորս հարիւր ութսուն վեցուկէս յիշ, նշնայէ և 16540 տասնը վեց հազար հինգ հարիւր տասը զիշ ընթացիկ դրամապատիկ պահանջն ի ձեռն գանձապետ Մեծ Հաճեան Անտոն Եփէնտիի Հոգարարութեան յանձնած ըլլալով, մեր խորին շնորհակալութեամբ:

* Պայմանաւ Պաշտպան Եփէնտիի որդի աղջիկ Նաեմիկ աղայի հետ:

Հակալիքը ներկայիս կը փութամբ մատուցանել ամեն անոնց՝ օրք պատուարժան մասնախումբին սոյն գովելի ձեռնարկութեան աջակից և ձեռնուող ըլլալով՝ ներկայ անձուկ և տաղանդաւոր ժամանակի միտիտարեցին Հիւանդանոցի խղճալի պատրաստութեամբ, և զհոգարարութեան քաջալերեցին:

Նաեւ խորին շնորհակալութիւն կը յայտնեմք պատուարժան մասնախումբին ազգասէր և Մեծ անդամաց, որք ամեն աշխատանք և զոհողութիւն յանձն առած՝ իրենց ազգութեամբ ձեռնարկին յաջողեցան արգելաւոր կերպիւր աւարտել, և երախտագիտական անմոռաց յիշատակ թողուլ կարգ մը խղճալեաց սրտին մէջ: Քաջալոյս է Հոգարարութեան թէ պատուարժան մասնախումբին սոյն ազգասիրական ձեռնարկը գեղեցիկ օրինակ մ'ըլլալով, յաջորդ տարիներ թէ՛ այս և թէ՛ սորի ձեռնարկներով բարեաւեր ան: Հինք Ազգ. Հիւանդանոցի մեծուպէս պիտի նպաստեն, ի պատիւ ազգիս և ի փառս բարեւէր ազգայնաց, որոնց դավիլն անունը տարակոյս չկայ թէ պատմութեան մէջ փառաւոր տալերով պիտի նշանակուի:

1878 յունիս 26 Միամբ յարգանք Դրաս. Հիւ. ի դիմաց Հոգ. Հիւ. Սեփեքի Մ. Մանուէլեան

... Խմբագիր .
Հաճեցէք ներկայեալ հարցաքննութեան հրաւերը Ձեր պատուական լրագրոյն մօտակայ թերթերուն միջոցաւ հրատարակել ի ծանօթութիւն դպրոցասէր ազգայնաց, որոյ վասն կանխաւ կը մատուցանեմք մեր շնորհակալեաց հաւատին: Տնօրէն Արամ. վարժ. Ա. Մանուէլեան

Արամեան երկսեռ վարժարանիս տարեկան հարցաքննութիւնները պիտի սկըսին ներկայ ամսոյն 10 ին և պիտի տեսնին մինչև 24 երկուշաբթի առաւօտեան ժամ 2 էն 5 և ցերեկին 8 էն 10. Ըստ հետեւեալ կարգացոյցի:

- Յուլիս 10 Իշ. Կրօնագիտութիւն:
» 11 Իշ. Պատմութիւն Ազգային և Ընդհանուր:
» 12 Իշ. Գաղղիերէն:
» 13 Իշ. Թուարարութիւն:
» 14 Իշ. Հայերէն և Տաճկերէն:
» 15 Իշ. Թուարարութիւն, Հանրահաշիւ, Երկրաչափ:
» 17 Իշ. Պատմութիւն Արաբացի, Ազգ. և Ընդհ. (շաբ.)
» 18 Իշ. Աշխարհագրութիւն և Տեղեկագրութիւն:
» 19 Իշ. Նախարարահի դասեր:
» 20 Իշ. Գծաբանութիւն, Գեղարվութիւն, Զետագործ և Դաշնակ:
» 21 Իշ. Հայ. և Գաղղիերէն (շաբ.)
» 22 Իշ. Նախարարահի դասեր (շաբ.)
» 24 Իշ. Մանչոց և աղջկանց միայն խորհրդարան կարգի՝ որոց մէջ չըմանին աւարտող ուսանողք կան, ամբողջ ուսմանց քննութիւնը:—

Հետեւաբար Հոգարարութեան կը խնդրէ որ բարեհաճիք ազգասիրաբար քաջալերել և խրախուսել զուսանող մանկերուն Ձեր պատուական ներկայութեամբ: 1/15 յուլիս 1878 Միամբ յարգանք ի Դատարար Հիւ. Նորադարձեան

ՊՈՂՈՍ ԷՖԷՆՏԻ ՄԻՍՏԻՉԵԱՆ

Առաջին կարգի վկայեալ փաստաբան Պատրաստ է ամեն կարգի օրինաւոր դատերու փոխանորդութիւն, յանձն առնուող դատերու վերաբերեալ գրութիւններ խմբագրել և ուղղորդելու դատական գործոց խորհուրդ տալ:

Գրասենեակն է Չաքմաքըրլար Գիւլիւք Եէնի խան վերնայարկ թիւ 9:

Ի Լ Ա Ն

Ներգամիցէ երգաբանաբար իշուն Տարը Շուրատա մահֆուզ նուառնէսի վէչէ իլէ ալընաճաք օլան իբի երգ պին քըյէ պիլինճի ալէա Սիպիլ եալընէ էլլի պին քըյէսի սոքսան տէօրթ սէնէի ըուլիսի աղոսթօս իպթիսաւ սընաան Նիհայէթինէ վէ տիկէր էլլի պին քըյէսի իլուլ իպթիսաւսընտան Նիհայէթինէ վէ տիկէր էլլի պին քըյէսի տախի թըլընի էլլի իպթիսաւ սընաան Նիհայէթինէ վէ քուսուր էլլի պին քըյէսի տախի թըլընի սանի Նիհայէթինէ քատար հէր պիլ մահըն թաքսիթի տէօրթ տէֆատա թէսլիմ օլունարաք տէօրթ այտա ճիւմէսինն արքաք ալընաք վէ ընամի կէօրիւկէ Նիհայէթինէ խաղինէսինն այլտ օլուպ ֆաւսթ թէսլիմ օլունաւայա քատար վուզու պուրաճաք մէսարիֆը նաքըյէ վէ սայիթսի ճիւմէթին միւթէա հիւտէ այիտ օլաւք վէ էսմանը մաք պուզ սէնէտինն վիլուտինտէ սիմ մէճիտիլէ իկիլիլ զրուշա օլարաք աղոսթօս իպթիսաւսընտան Նիհայէթինէ քատար տէօրթ տէֆատա սյընաճաք էլլի պին քըյէ եաղըն մէճմուլի պահաք իլուլ իպթիսաւսընտան Նիհայէթինէ քատար տէօրթ թաքսիթ իլէ թէտիլէ օլընմաք վէ իլուլ վէ թըլընի էլլի վէ սանի ալըլընտա վիլ իլէճէք եաղարըն պահաք տախի աղոսթօս ալընտա վիլիլէ եաղըն պահաքնն սուրէթի թէտիլէսի վէչէ իլէ իպթ օլընմաք վէ միւթէսիւտին էլլէքի եաղ քօնթրաթօլարտան սոլայը Նիհայէթինէ խաղինէսինտէ միւթէա պը օլան պէշ երգ տիկիլիլ սիքիլ պին պէշ իլուլ զըշ տախի երինէ իլուլ իպթիսաւսընտան իթիպարէն իբի մահտա ճէսթէ ճէսթէ իթա օլընմաք վէ էլէքի ախէր թախիլինն ետինտէ Նիհայէթինէ խաղինէսի սուրէթի պուլու Նուր իսէ օլընքատար մէպալիլ պէր վէչէսի մահարըն իբի այտա վէրիլ մէք շաքը վէ շէրայիթը սայիթի միւթէֆիլիլէսի իլէ պէճէր քըյէսի սն իւշ զըշ օն փարայա թախիլի էօհտէսինտէ օլուպ թէմուզը ըուլինն ալթըն փէնճէնպիսի կիւնիւ գարարը գաթիսի վէրիլէճէ իլինտէն, իթապընտ թախիլ օլունլարըն ետիլի մէքիլարէ Տարը Շուրալի սաքըլիլէ կէմէլէրի 4 թէմուզ 1877 Պաղը Սէրասքերի

ՄԷԹՈՏԻ ՎՐԱՑ

Գրեց Գ. Կոստանդեան

«Իր երեան դիտակն մատենաշարի սոյն առաջին հատորը, որ 163 երեսէ կը բաղկանայ, իզմիրի Տէտէ եւան եղարաց տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Եէնի ճամի Չիլիկիլիլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին մէկ քառորդ մէճիտ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՏԵՆԱԹՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Արտասանեց Թ. Միքայիլեան

Ի Զ Գ Ե Ե Ե

Կը ծախուի Կ. Պոլիս Թ. Գալաֆեանի գրատունը: Գին 3 զըշ:

ՎԻՍՏԻՊ ՊԱՏԿԵՐ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԻԱՆԵՐԱՆՏԻ

Սոյն նշանաւոր հայրենասիրին մեծադիր պատկերը, խիստ վայելուչ և մաքուր գծուած կը ծախուի Թըռէնկեան գրատունը և ամեն Հայ գրավաճառաց քով, դիւրամատչելի գնով: Արժան է որ ամեն հայրենասէր Հայ մի օրինակ առնու սոյն պատկերէն:

